ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

31.01.2024 N 06/12.2/1183-2024

ՀՀ Կոտայքի մարզ,
Աբովյան համայնքի ղեկավար
պարոն Էդուարդ ԲԱԲԱՅԱՆԻՆ

2024 թվականի հունվարի 12-ի
N Ե-286 գրություն

Հարգելի պարոն Բաբայան

Ձեզ է տրամադրվում ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Կամարիս բնակավայրի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականությունը հանդիսացող 07-035-0161-0066 կադաստրային ծածկագրով 0.19462 հա մակերեսով հողամասը, բնակելի տուն և ավտոտնակ կառուցելու համար, գյուղատնտեսական նպատակային նշանակության (վարելահող և արոտավայր) հողերից բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերի փոխելու առաջարկության վերաբերյալ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի անդամների կարծիքների ամփոփ տեղեկանքն ու դրական եզրակացությունը:

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3 հոդվածի 30-րդ մասի պահանջները՝ նշված փոփոխությունն անհրաժեշտ է արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Կամարիս բնակավայրի գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող դրույթների փոփոխությունները և գլխավոր հատակագծի վերը նշված փոփոխությունը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշման քաղվածքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում տրամադրել մեզ:

Հաշվի առնելով վերոգրյալն անհրաժեշտ է վերը նշված փոփոխությունն ընդգրկել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվերով մշակվող ՀՀ Կոտայքի մարզի Կոտայք-2 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառված Կամարիս բնակավայրի նախագծում:

Առդիր՝ 2 ֆայլ:

Հարգանքով՝

Նունե ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ստորագրված է էլեկտրոնային ստորագրությամբ

Ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ
Հովիկ Դավթյան, հեռախոս՝ 011 621 725,
Կատարող՝ Լիլիթ Պալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
Մուտքի թիվ Պ-225
«31» 01 2024